

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

30 սեպտեմբերի 2022թ.
ք.Երևան

N 77- Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԲՅՈՒՐԵՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՔՎԵԱՐԿԱԾ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԿԱՆԻՑ ՀԵՏՈ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԸ
ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ Սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության լիազոր ներկայացուցիչ Արուսյակ Մանավազյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Թույլատրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ - ում բացված նախընտրական հիմնադրամի միջոցներից վճարում կատարել մինչև քվեարկության նախորդ օրը կատարված գործարքների համար՝ 858 400 (ութ հարյուր հիսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅ**

Տ. ՄՈՒԿՈՒԳՅԱՆ